

ՔԱՐՈՋԵՍՈՍԱԿԱՆ

**ԱՂԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՈԳՉԵԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՕՍՈՒԱԾ ԳԱԼՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻՆ, Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ Ի ՆՈՐ ԵՐՈՒՍԱՂԷՄ
(21 Ապրիլ, 2024)**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

Սիրելի՛ հաւատացեալներ, այսօր կը տօնենք Մեծ Պահոց վեցերորդ Կիրակին, որ կը կոչուի Գալստեան Կիրակի: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր կը ոգեկոչէ Յիսուս Քրիստոսի Առաջին գալուստը, որ եկաւ փրկելու մեղաւոր մարդկութիւնը, որովհետեւ, ինչպէս Գրիգոր Տաթեւացի կ'ըսէ. «Ան իր գալուստով փրկեաց զմեզ ի մահուանէ, փրկեաց զհոգիս ի տանջանաց դժոխոց»: Յիսուս Քրիստոս իր Առաջին գալուստով մեղաւոր մարդկութեանը հնարաւորութիւն տուաւ ընթանալու ճիշդ ուղիով եւ ժառանգելու Երկնքի արքայութիւնը: Տիեզերքի Փրկիչը յանձն առաւ ամենէն անարգ մահուան ձեւը, եւ այն մեզի համար դարձուց ժամանակաւոր, իսկ կեանքը՝ յաւիտենական:

Աթանաս Ալեքսանդրացի Քրիստոսի Առաջին գալուստը կը բնութագրէ ըսելով. «Աստուած մարդացաւ, որ մարդն աստուածանայ»: Հետեւաբար, Յիսուս Քրիստոս իր գալուստով ոչ միայն ազատեց մարդը իր մեղքերէն եւ դժոխքի յաւերժական շարչարանքներէն, այլեւ աստիճան մը հաստատեց ասդեանական կեանքէն դէպի յաւերժականը, որուն իւրաքանչիւր սանդուխտ մենք պիտի կառուցենք մեր բարի եւ աստուածահաճոյ գործերով, որպէսզի պատրաստ ըլլանք Փրկչի Երկրորդ գալստեան եւ կարողանանք դէպի երկինք երկարող այդ աստիճաններով բարձրանալ ու ժառանգել խոստացուած յաւերժական կեանքը:

Սիրելիներ, այս Կիրակին նաեւ Քրիստոսի Երկրորդ գալստեան խորհուրդը եւ ազդանշանը ունի: Ըսել կ'ուզեմ, թէ մենք կը գտնուինք Առաջին եւ Երկրորդ գալուստներուն միջեւ, կ'ապրինք ու կը վայելենք Անոր Առաջին գալստեամբ մեզի շնորհուած բարիքները՝ Երկրորդ գալստեան անհամբեր սպասումով: Եթէ առաջին անգամ Քրիստոս եկաւ որպէս Փրկիչ եւ ազատեց մարդը դժոխքէն, երկրորդ անգամ պիտի գայ որպէս դատաւոր՝ մեղաւորները դատելու, իսկ արդարները՝ Երկինքի արքայութեան արժանացնելու, ինչպէս որ հաւատամքին մէջ կ'ըսենք. «Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր, ի դատել զկենդանիս եւ զմեռեալս»: Սակայն, Երկրորդ գալստեան օրւան ու ժամուան մասին ոչ ոք գիտէ, որովհետեւ առաքեալներու հարցին, թէ «Վարդապետ, ե՞րբ պիտի ըլլայ այդ, եւ ի՞նչ պիտի ըլլայ նշանը քու գալուստիդ եւ այս աշխարհի վախճանին» (Մատթ. ԻԴ:3), Յիսուս կը պատասխանէ եւ կ'ըսէ. «Այդ օրուան ու ժամուան մասին ոչ ոք գիտէ, ո՛չ երկնքին հրեշտակները եւ ո՛չ ալ Որդին, այլ միայն՝ Հայրը» (Մատթ. ԻԴ:36): Այս պարզ բառերու ետին մեծ խորհուրդ կայ թաքնուած, որը Երկրորդ գալստեան տարածամ պատրաստ ըլլալու կոչն է մեզի:

Քրիստոս իր Առաջին գալստեան ժամանակ իրեն հետեւող առաքելաներուն իմացուց նաեւ իր Երկրորդ գալստեան մասին: Ինչպէս որ հողագործ մշակ մը իր այգիին

մէջ սերմեր ցանելով երբեք չի հեռանար անկէ չվերադառնալու մտօք, այլ ճիշդ հակառակը, պայմաններ կը ստեղծէ, որ այդ սերմերը ծաղկին եւ պտղաբերեն, այդպէս ալ Քրիստոս իր Առաջին գալստեան ժամանակ մեր մէջ ցանեց Երկրորդ գալստեան պատրաստ ըլլալու սերմերը եւ կարգեց մեզի մեր իսկ կեանքի մշակներ: Այս կը նշանակէ, թէ Երկրորդ գալստեան ատեն Ան պիտի գայ քաղելու այն պտուղները, որոնց իբրեւ մշակ կարգած էր մեզի, իսկ եթէ անպտուղ գտնէ մեզ՝ կ'արժանանանք անպտուղ թղենիի ճակատագրին:

Հետեւաբար, սիրելիներ, այս Կիրակին եթէ մեզի համար Երկրորդ գալստեան կոչը պիտի ըլլայ, այդ կը նշանակէ, թէ Աստուծմէ մեզի տրուած պատգամները մենք չենք գործադրէր յօգուտ մեր փրկութեան, աւելին՝ Երկրորդ գալստեան փաստը մոռնալով, մեղքեր կը գործենք՝ գիտակցաբար մենք զմեզ զրկելով յաւիտենական կեանքէն: Այլ խօսքով, գիտնալով բարին, ճշմարիտը՝ կ'ընենք չար եւ սխալ գործեր՝ նմանելով Պօղոս Առաքեալին, որ Հռոմէացիներուն ուղղուած թուղթին մէջ կ'ըսէ. «Ոչ թէ կ'ընեմ բարին զոր կ'ուզեմ, այլ կ'ընեմ չարը զոր չեմ ուզեր: Իսկ եթէ կ'ընեմ ինչ որ չեմ ուզեր, այլեւս ե՛ս չէ որ կ'ընեմ զայն, այլ՝ իմ մէջս բնակող մեղքը» (Հռոմ. Է: 19-21): Պէտք է յստակ գիտնանք, որ մեր լաւ մտածումներն ու փափաքները չեն որ մեզի պիտի արժանացնեն Երկնքի արքայութեան, այլ՝ անոնց գործադրումը: Եթէ գիտնալով Քրիստոսի Երկրորդ գալուստի մասին մեզի տրուած ժամանակը չենք գործածէր, այս կամ այն պատճառաբանութեամբ կը յետաձգենք մեր անձերու պատրաստումը Անոր Երկրորդ գալստեան ժամանակ իր առջեւ բաց ճակատով կենալուն, եւ կը խորհինք թէ այդ ժամանակը միշտ պիտի ունենանք՝ չարաչար կը սխալինք, որովհետեւ մեզի տրուած ժամանակը հոմպետս վատնելով՝ Երկրորդ գալստեան ատեն մենք զմեզ Քրիստոսի առջեւ անպատրաստ պիտի գտնենք: Եւ քանի որ ո՛չ օրը գիտենք, ո՛չ ալ ժամանակը, այս Կիրակի օրուան նման օր մըն ալ Քրիստոսի Երկրորդ գալուստը պիտի ըլլայ, կամ ալ անակնկալ կրնանք հեռանալ այս աշխարհէն: Հետեւաբար, եկէք մենք զմեզ հարցում ընենք. արդեօք պատրաստ ենք այդ օրուան:

«Յայսմաւուրք»ին մէջ կը պատմուի, թէ վանքի մը վանականներուն մէջ հարց մը կ'առաջանայ, որը կը վերածուի խնդրի, որովհետեւ անոնք չեն կրնար այս հարցին շուրջ պատասխան գտնել եւ համաձայնութեան գալ: Առակը հետեւեալն է. Երկու մարդ կ'ըլլան, որոնցմէ մին քառասուն տարի մեղաւոր կեանքով կ'ապրէր եւ ամէն գիշեր քնանալէ առաջ ինքզինքին կ'ըսէր, թէ անդրադարձած է իր մեղքերուն եւ առտու արթննալուն պէս վանք պիտի երթար իր կեանքը Աստուծոյ պիտի նուիրէր եւ մնացեալ օրերը մաքուր կեանքով պիտի անցընէր: Գիշեր մըն ալ ան կը քնանայ եւ առտու չարթննար: Իսկ միւսը, որ վանական էր եւ քառասուն տարի ճգնած էր վանքին մէջ, իր կեանքը անցուցած էր ծոմապահութեամբ, աղօթքով, աստուածահաճոյ բարի գործերով, ամէն գիշեր քնանալէ առաջ կ'որոշէր թէ առտու պիտի արթննար եւ երթար վայելելու աշխարհիկ կեանքը, որմէ ինք զրկուած էր քառասուն տարի: Այս վանականը եւս առտու չարթննար: Վանականներու մէջ առաջացած խնդրաշարոյց հարցը այս էր, թէ անոնցմէ ո՞ր մէկը դրախտ պիտի երթար եւ ո՞ր մէկը՝ դժոխք: Համաձայնութեան չգալով՝ վանականները կը դիմեն վանքի վանահօրը, որը կու տայ հարցին պատասխանը ըսելով. «Վանականը պիտի փրկուի իր առաքինութեան համար, իսկ մեղաւորը պիտի կործանուի իր մեղքերու պատճառով»: Երբ վանահօրը կը հարցնեն. «Ինչո՞ւ, չէ որ մեղաւորը որոշած էր Աստուծոյ դառնալ եւ ապաշխարել, իսկ վանականը ճշմարտութիւնը գիտնալով՝ որոշած էր շեղիլ Աստուծոյ ճիշդ ճամբայէն»: Վանահայրը կը պա-

տասխանէ. «Վանականը ամէն գիշեր կ'որոշէր առտու արթննալուն պէս երթալ, վայելել աշխարհիկ բարիքները, որոնցմէ այսքան ատեն ինքզինքին զրկած էր, սակայն այս երկրին վրայ իրեն տրուած քառասուն տարին ան ճիշդ գործածեց եւ բնաւ չխոտորեցաւ Աստուծոյ ճշմարիտ ճանապարհէն, մինչեւ կեանքի վերջին օրը չդժեց իր եւ Աստուծոյ միջեւ կնքած ուխտը եւ որեւէ վկայութիւն չկար, թէ ան պիտի հեռանար վանքէն: Նոյն է պարագան մեղաւորին: Ան իրեն տրուած քառասուն տարին չօգտագործեց իր փրկութեան համար եւ ամէն գիշեր կ'որոշէր, թէ առտու պիտի արթննար եւ վանք պիտի երթար, բայց ամէն առտու միտքը կը փոխէր՝ շարունակելով իր մեղաւոր կեանքը եւ որեւէ վկայութիւն չկար, թէ ան իր մեղաւոր կեանքէն Աստուծոյ պիտի դառնար»:

Սիրելիներ, կ'աղօթեմ, որ չետածգէք ձեր բարի եւ աստուածահաճոյ միտքերու գործադրումը, որովհետեւ միշտ չէ որ ունիք ձեր թուացեալ բաւարար ժամանակը եւ օր մը ձեր կամքէ անկախ պիտի հեռանաք այս աշխարհէն եւ պիտի կենաք Քրիստոսի Երկրորդ գալստեան՝ արդար դատաստանին առջեւ: Հետեւաբար, Գալստեան այս Կիրակիին եկէք միասնաբար աղօթենք առ Աստուած, որ Ան իր Երկրորդ գալստեան ժամանակ գթասիրտ գտնուի բոլորիս նկատմամբ, միեւնոյն ատեն եկէք մենք զմեզ հարցնենք. եթէ այսօր Քրիստոսի Առաջին գալստեան խորհուրդը կրող Գալստեան Կիրակիի փոխարէն ըլլար Քրիստոսի Երկրորդ գալստեան օրը մենք պատրաստ պիտի ըլլայի՞նք Անոր արդար դատաստանին, որուն վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ՄԱՍԻՆ

Գիտութիւնը Արարչի մտքի թարգմանութիւնն է մարդկային լեզուի:

ԱԳԱՍԻՍ ԺԱՆ ԼՈՒԻ

Աշխարհի լինելիութիւնը համոզիչ ապացոյցն է Աստուծոյ գոյութեան, ամենայնն Արարողի եւ Նախաշղացողի:

ԱԳԱՍԻՍ ԺԱՆ ԼՈՒԻ

Ժամանակի եւ տարածութեան միասնութեան մէջ երեւան կու գան ոչ միայն միտքը, այլեւ մտայղացումը, ուժը, բանականութիւնը, վեհութիւնը, կանխատեսումն ապագայի, իմացութիւնն ու տեսլականը ամենայնի: Մէկ խօսքով՝ այս բոլոր որակներն ի լուր ամէնքի կ'աւետեն Աստուծոյ գոյութեան մասին, Որու առջեւ մարդը պէտք է խոնարհի, Որուն մարդը պէտք է սիրէ:

ԱԳԱՍԻՍ ԺԱՆ ԼՈՒԻ